№ 195 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 195

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում վճարվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ.

Սեպտեմբ. 1-ից մինչև հոկտ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է այն անձանց, որոնք ցանկանում են իրանց վրա վերցնել քաղաքային երկու հիւանդանոցների՝ Արամեանի և Ալէքսանդրովսկի, երկու ապաստարանների՝ ծննդաբերական, հոգեկան հիւանդների և քաղաքային Միքայէլեան արհեստաւորաց դպրոցի ուտեստեղէնի մատակարարումը։ Մսի, հացի և կաթի մատակարարութեան համար կարելի է տալ առանձին յայտարարութիւններ։ Պայմանների և կոնդիցիայի ծրագրերի և միւս բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնների մասին կարելի է դիմել քաղաքային վարչութեան մթերային բաժանմունքը։ Յայտարարութիւնները գցվում են վարչութեան I բաժանմունքում նրանց համար յատկացված արկղը։ Յայտարարութիւնները կարելի է տալ մինչև սեպտեմբերի 10-ը։
(առ.) 642. 3—2

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ու ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
Բէբուտովսկայա, № 5.
Ընդունվում են տղայ և աղջիկ և պատրաստվում բոլոր միջնակարգ դպրոցների համար։
(ա. օ.) առ. 636. 5—4

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Վերադառնալով ամառանոցից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւ-) 10—11 ժ. առ. (երեխաների)
նը ամէն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելեֆոն 388.
(հ.հ.կ.) առ. 606. 10—7

ԲԺԻՇԿ
Ի. Դ. ԲԷԿԹԱԲԷԿԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
(առ.) 653. 1—1

ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

I

Գրեթէ ճակատագրական, ֆատալ վիճակ է դարձել Թիւրքահայերի համար, որ ամէն անգամ, երբ որևէ մի պետութիւն, մի պետական անձն որևէ մի առաջարկութիւն է անում, որևէ մի ծրագիր առաջարկում Թիւրքիայի մէջ րէֆորմներ մտցնելու համար, անմիջապէս նրա հակահարուածը կրում են դժբաղդ Թիւրքահայերը։

Կամ ամէն անգամ երբ ֆանատիկոս Թիւրքերը, քիւրդերը անկարող են լինում լուծել վրէժ ըմբոստացած բուլղարների, մակեդոնացիների, քրիստոնեայ ալբանացիների կատարած տերրորիստական ակտերի համար—իրանց բարկութիւնը և վրէժը թափում են խեղճ Թիւրքահայերի գլխին, որովհետև հայը, իբրև քրիստոնեայ, համարվում է եղբայրակից բոլոր այն գեավուրների, որոնք գլուխ են բարձրացնում իսլամի դէմ։

Վերջին հեռագիրները, լրագրական տեղեկութիւնները հաղորդեցին, որ ջարդերը, աւերումները Թիւրքաց Հայաստանում վերսկսել են։ Նորից զինված քիւրդերը հրապարակ են եկել մահ և սարսափ տարածելով անզէն հայ ժողովրդի մէջ։ Տեղական իշխանութիւնները ոչ միայն ոչ մի կտրուկ, իրական միջոցի չեն ձեռնարկում ոճրագործներին պատժելու, այլ և կենտրոնական իշխանութիւնը Կ. Պոլսում, որին դիմում է հայոց պատրիարքը բողոքներով և պահանջներով՝ վերջ տալ անմիջապէս կոտորածներին, նոյնպէս անտարբեր ընթացք է բռնում, կամ պատասխանելով թէ լուրերը չափազանցված են, կամ տալով անորոշ խոստումներ՝ «գործադրել օրէնքի տրամադրութիւնը և պատժել յանցագործներին»։

Հարստահարութիւնները, կեղեքումները, մասնակի կոտորածները, սպանութիւնները բազմացել էին վերջին տարին, բայց նրանք աւելի մեծ ծաւալ ստացան անմիջապէս այն օրից ի վեր, երբ տապալվեց Իթթիհադեան տիրապետութիւնը, գործի գլուխ անցաւ Իթթիլաֆի կուսակցութիւնը, և երբ յայտնի դարձաւ աւստրիական արտաքին գործերի մինիստր կոմս Բերխտոլդի առաջարկը՝ տալ Թիւրքիայի մասն կազմող ազգութիւններին լայն ինքնավարական իրաւունքներ՝ իշխանութիւնը աստիճանական ապակենտրոնացման ենթարկելով։

Մենք մի քիչ յետոյ կը խօսենք կոմս Բերխտոլդի առաջարկի մասին. այսօր կանգ կառնենք նոր ջարդեր, հարստահարութիւններ յայտնող աղէտալի լուրերի վրա։

Սուլթան Համիդի օրով ջարդեր, կեղեքումներ, աւերումներ՝ մասսայական կամ մասնակի միշտ գոյութիւն ունէին։ Երբ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը և հրապարակվեց սահմանադրական ռէժիմ, սկսեցին քարոզել, թէ այլ ևս ոչ մի ջարդ, ոչ մի աւերումն տեղի ունենալ չէ կարող։ Բայց տեղի ունեցաւ Ադանայի սոսկալի ջարդը, որի ժամանակ աւելի քան 30,000 հայ կոտորվեց։ Աշխատեցին այդ ևս բացատրել տապալված պետական ռէժիմի վերջին ջղաձգութիւններով։ Սակայն, չը նայելով որ այդ պարլամենտի մէջ կային 10—12 հայ դէպուտներ կամ երեսփոխաններ, չը նայելով որ պատրիարքը այլ ևս Օրմանեանը չէր, որ առաջ մեղադրվում էր իբրև համակերպվող, չը նայելով որ ազգային ժողովը ևս վայելում էր իր բոլոր իրաւունքները, չը նայելով որ «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութիւնը հաւատացնում էր շարունակ հայ ժողովրդին, թէ իբրև արթուն պահապան կանգնած է նրա պաշտպանութեան համար, այնուամենայնիւ հարստահարութիւնները, կեղեքումները, մասնակի կոտորածները և սպանութիւնները չը դադարեցին բնաւ։

Եւ ահա այսօր մենք կանգնած ենք այն մեծ աղէտի առաջ, որ այդ մասնակի կոտորածները կարող են վերածվել մասսայականի, եթէ անմիջական, կտրուկ միջոցներ ձեռք չառնվեն։ Ինչով բացատրել այս ամենը և ինչ հնար, միջոց կայ փրկելու Թիւրքիայի դժբաղդ հայ ժողովուրդը իր վերահաս տանջանքներից։

Այդ մասին կը խօսենք վաղը։

Հ. Առաքելեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս ստացել է Հայոց Միացեալ Ընկերութեան տնօրէն ժողովից այդ կուլտուրական՝ համակրելի հաստատութեան վերջին եռամեայ գործունէութեան ընդարձակ տեղեկագրից բազմաթիւ օրինակներ, զարդարված բազմաթիւ մաքուր նկարներով, ինչպէս և Թիւրքահայաստանի մի քարտէզով, որը դիտողին ցոյց է տալիս, թէ յիշեալ Ընկերութիւնը ուր կէտերում դպրոցներ ունի բաց արած և քանի հատ։

Մեր ընթերցողներից նրանք, որոնք ցանկանում են ունենալ այդ հրատարակութիւնն իրանց ձեռքի տակ, թող ուղարկեն միայն ճանապարհածախսը, 16 կոպէկի նամականիշ, և մենք կուղարկենք ձրիաբար նրանց հասցէին յիշեալ տեղեկագիրը, որ բաղկացած է աւելի քան 184 էջից և որով կարելի է ամփոփ գաղափար կազմել այդ պատկառելի հաստատութեան անցեալի և ներկայի վերաբերմամբ։

Տեղեկագիրը տպված է ընտիր թղթի վրա, մաքուր և խնամքով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

Պետերբուրգ.—(Պաշտօնական)։ Նոյին Մեծութիւններ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնան Գահաժառանգ Արքայորդու և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայէվիչի ու Օգոստափառ Դուստրների հետ այսօր բարեհաճեցին ժամանել Բէլովէժ, ուր և պէտք է բնակվեն։ Պալատի մինիստր Ֆրէդէրիկս։

—

Պետերբուրգ (Պաշտօնական).— Հրաման զինւորական վարչութեանը օգոստոսի 30-ից. «Օգոստոսի 28-ին, երբ Կայսրը դիմում էր Խօդինի դաշտը, տեղի ունեցաւ զօրակազմից հեռանալու չեղած մի դէպք. Սօֆիայի յանուն Ալէքսանդր III-ի երկրորդ հետևակ գնդի չորրորդ վաշտի զինւորներից մէկը վազեց իր վաշտի կազմից Թագաւոր Կայսրին խնդրագիր ներկայացնելու համար։

«Նորին Կայսերական Մեծութիւնը ապագայում այդօրինակ ցաւալի դէպքեր չը կրկնվելու համար Բարձրագոյնս հրամայեց. նկատողութիւն անել Մոսկվայի զինւորական շրջանի զօրահրամանատարին, զգուշացնել 13-րդ զօրաբանակի հրամանատարին, նկատողութիւն անել առաջին հետևակ զօրաբանակի առաջնորդին, խստնկատողութիւն գնդի հրամանատարին, առաջին բատալիոնի հրամանատարին պաշտօնանկ անել, իսկ վաշտի հրամանատարին արձակել պաշտօնից»։ Ստորագրեց զինւորական մինիստր գէնէրալ Սուխոմլինով։

—

Չիժէվ.—Թագաւոր Կայսրը ժամանեց Բէլովէժից ներկայ լինելու Վարշավայի շրջանի զօրքերի վարժութիւններին։

—

Սմոլէնսկ.—Նահանգապետը յայտարարում է, որ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին հաճելի եղաւ Սմոլէնսկից մեկնելու ժամանակ բաղդաւորեցնել նրան յանձնարարելով Նորին Մեծութեան և Թագուհի Կայսրուհու անունից շնորհակալութիւն յայտնել քաղաքի և գաւառների բոլոր կառավարական և հասարակական հաստատութիւններին ու ամբողջ ազգաբնակութեան, որոնք բաղդ ունեցան օգոստոսի 31-ին ողջունել Նոյին Մեծութիւններին այն սրտագին ընդունելութեան համար, որ հանդիպեցին Նոյին Մեծութիւնները Սմոլէնսկում, որից չափազանց զգացվել են Նոյին Մեծութիւնները։

—

Պետերբուրգ.—Բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնված Մոսկվայի նահանգապետ Ջունկովսկիին, քաղաքապետ Ադրիանովին և Սմոլէնսկիի նահանգապետ Սուկովկինին Բարձրագոյն ներկայութեան ժամանակ տիրող օրինակելի կարգապահութեան համար։

—

Մօնկօնտիր.—Ի պատիւ օտարազգի օֆիցէրների տրված նախաճաշին Միլէրանը իր ճառի մէջ գովաբանեց զօրաբանակի ղեկավար գէնէրալ Ժօֆրին և նրա բոլոր աշխատակիցներին, շնորհակալութիւն յայտնեց զինւորներին, որոնք հրաշալի զէնք են հանդիսանում ազգի արժանապատւութիւնն ու ապահովութիւնը պաշտպանող օֆիցէրների ձեռքում։ Ետոյ մինիստրը ողջունեց Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայէվիչին հետևեալ խօսքերով. «Ֆրանսիական զօրքի համար մեծ ուրախութիւն է պատճառում և անկեղծ պարծենալու առիթ է տալիս Ձերդ Կայսերական Բարձրութեանը և Ձեզ շրջապատող շքախմբին ողջունելու հնարաւորութիւնը։ Մենք չենք մոռացել այն ընդունելութիւնը, որին՝ սկսած Կրօնշտադտից մինչև Մոսկվա՝ հանդիպեց Ֆրանսիայի հանրապետութեան նշանաւոր ներկայացուցիչը. չենք մոռանում, որ դեռ երէկ ֆրանսիական զինւորական միսիան իր ընկերների հետ միասին տօնում էր այն դարագլխի 100 ամեակը, երբ ռուսները և ֆրանսիացիք, կռւելով, սկսեցին ճանաչել, յարգել ու սիրել միմեանց»։ Այնուհետև բարի գալուստ մաղթելով անգլիական միսիային և միւս օտարազգի օֆիցէրներին, Միլէրանը բաժակ առաջարկեց Ֆալիէրի, Մեծ Իշխանի, ռուսական և անգլիական միսիաների, բոլոր օտարազգի օֆիցէրների, գէն. Ժօֆրի, նրա աշխատակիցների և ֆրանսիական զօրքի համար։ Մեծ Իշխանը շնորհակալութիւն յայտնեց ջերմ դարձուածքներով ընդունելութեան համար և բաժակը բարձրացրեց հանրապետութեան նախագահի առողջութեան, ֆրանսիական ազգի բարգաւաճման և Միլէրանի ու Ժօֆրի առողջութեան համար։

—

Շինօն.—Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայէվիչը ընդունեց անգլիական զինւորական միսիայի պարագլուխ գէներալ Վիլսօնին և երկար խօսակցեց նրա հետ։

—

Դէրնա.—Գէնէրալ Րայզոլին Թիւրքերի ուժեղ խմբերի հետ ճակատամարտելուց յետոյ գրաւեց ուժեղ դիրք։ Իտալացիք կորցրին 3 սպանված և 10 վիրաւոր։ Թիւրքերի կորուստները խոշոր են։

—

Հռոմ.—Ջիօլիտտիի Պիէմօնտ մեկնելուց առաջ տեղի կունենայ մինիստրների չափազանց կարևոր խորհրդակցութիւն։

—

Թաւրիզ.—Սիփէհդարը շքախմբով առաջին այցելութիւնը գործեց ռուսաց զօրամասի հրամանատարին և հիւպատոսներին։

—

Թէհրան.—Լուրերի համաձայն՝ Եար Մուհամմէդ-խանը գերել է Սալար-ուդ-Դովլէին։

—

Բէլֆաստ.—Սպօրտի մրցատեղում տեղի ունեցաւ ընդհարում ֆուտբոլիստների խմբերի մէջ, որ յետոյ փոխվեց ծեծ ու ջարդի քարերով ու աղիւսներով։ Ոստիկանութիւնը անզօր երևաց զսպելու հազարաւոր կատաղած ամբոխին։ Ատրճանակների գնդակներով վիրաւորվեցին 58 մարդ, մի քանիսը ծանր։

—

Կիօտօ.—Սգազնացքը կայսրի աճիւնով հասաւ և դիմաւորվեց բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներից Մամօեամում, որ հնուց համարվում է աստուածների բնակավայր։ Դագաղը տարվեց զօրքերի շարքով. սգերթին մասնակցում էին կայսերական գերդաստանի անդամները ոտով։ Մարմինը առանձին բարձր շինված տեղում հողին յանձնվեց միայն կայսերական ընտանիքի ներկայացուցիչների և քուրմերի ներկայութեամբ։ Դիակառքը այրեցին. մոխիրը կը թաղվի պալատի մօտ։ Նոյն իսկ այն գնացքի մնացորդ մասերը, որով բերվեց աճիւնը Տօկիօյից, կը մանրացվի և կայրվի։

—

Մուկդէն.—Լրագիրներին արգելվեց տեղեկութիւններ տպել մոնղոլական գործերի մասին։

—

Վենետիկ.—Վճռաբեկ դատարանը Տարնովսկայայի և Նաումովի դատապարտեց վճարելու 69,000 ֆրանկ կոմս Կոմարովսկիի ժառանգներին և նրանց վրա դրեց դատական ծախքերի 400 ֆրանկը։

—

Լիսաբօն.—Պորտուգալիան և Սպանիան համաձայնութիւն կայացրին պորտուգալական միապետականների սպանական սահմանն անցնելու մասին։

Պորտուգալական հանրապետութեան դէմ կազմված դաւադրութեան գլխաւոր մասնակցողները և պարագլուխները աքսորվում են Սպանիայից։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

[illegible]

Կ. Պոլիս, 24 օգոստոս

Լեւոն Լարենց կոչուած ստորին ոճրագործը չենք գիտեր ինչպէս համարձակած էր «Հորիզոնի» 175 թիւին մէջ սրիկայաբար յարձակիլ Հ. Առաքելեանի, պրոֆ. Յովհաննէս Յակոբեանի և այլոց վրայ։

Սողունի մը «Հորիզոնի» մէջ գտած ընդունելութիւնը մեզի կը զարմացնէ, և չէ թէ իրմով զբաղելու ախորժակ ունենալնուս համար, այլ «Հորիզոնի» խմբագրութեան գաղափար մը տալու համար, թէ իր էջերուն մէջ հիւրընկալուած հայհոյիչն ով է, այս օրերս հոս մղուած վէճ մը պիտի ծանօթացնենք։

Լարենց՝ Աղաբազարի Կեդր. վարժարանին տնօրէն կարգուած էր։

«Լուսարձակ» դառն բառերով յարձակեցաւ այս կարգադրութեան դէմ, ոճրագործի մը տնօրէն կարգուիլը վարժարանի մը՝ դատապարտելով։

Լարենց՝ ինքզինքն Ունճեան Աբիկի սպանութենէն անպարտ հռչակած ըլլալով՝ «Լուսարձակ» իր օգոստոս 23-ի թիւին մէջ հետևեալ վճռական տողերը հրատարակելով դիմակազերծ ըրաւ Ունճեանի պէս պատուական հայու մը սպանիչին կեղծիքն ու դիմակը։

Ահա այդ յօդուածը։

«1905 օգոստոս 14-ին, ս. Աստուածածնայ շաբաթ օրը, Աբիկ Ունճեան Ղալաթիա, Քօմօսիօն խանի առջև գտնուած ալիւրի վաճառականի մը գրասենեակը երթալու պահուն սպաննուեցաւ։ Այս պարզելի ոճիրը խորին յուզում առաջ բերաւ հայկական և միջազգային շրջանակներու մէջ։ Սպանիչը թէև զէնքը ձերբակալելու փութացող ոստիկաններուն վրայ զէնք արձակեց ու փախչիլ փորձեց, բայց չյաջողեցաւ և ձեռք անցունելով տարուեցաւ Գալաթա-Սէրայ։ Սպաննիչին անունն էր Կարապետ Վարդանեան։

«Այս դէպքէն քանի մը ամիս առաջ պատահած էր Ելտըզի ռումբային պայթումը և Պոլսոյ մէջ սաստիկ արհաւիրք կը տիրէր այդ միջոցին։ Նէջիբ Մէլհամէի հայաչարչար ծանօթ կոմիսիոնը կազմուած էր և բազում ձերբակալութիւններ կ'ընէր։ Աբիկ Ունճեանի սպաննութեան խնդիրը Նէջիբ Մէլհամէի յանձնուեցաւ, որովհետև տակաւին յայտնի չէր, թէ ռումբայի գործին մէջ հայերը մասնակցութիւն ունէին թէ ոչ։ Այդ օրերուն Լեւոն Լարենց Պոլիս էր և խմբագրական գործերով կը զբաղէր։ Զինքը տեսնողները այլայլած կը գտնէին, մինչև որ քանի մը օր ետք, երբ յայտնուեցաւ թէ Ունճեանի սպաննութիւնը տէռօրական գործ է, Լեւոն Լարենց Պոլսէն խոյս տուաւ։

«Կարապետ Վարդանեան մէկ օր և մէկ գիշեր հարցաքննուեցաւ Պէրայի Միւլժանէթիք Թաղէոս Րեֆքը էֆ.-ի կողմէ, բայց ուրացաւ սպաննութեան իր կողմէ կատարուած ըլլալը։ Միայն թէ Կարապետ Վարդանեան, ոճիրը գործած պահուն և զէնք արձակելուն հետևանքով ձերբակալուած ըլլալով, յանձնուեցաւ դատական իշխանութեան։ Խնդրին քաղաքական բնոյթ ունենալը յայտնի էր, բայց ապացոյց չըլլալուն համար դատը տեսնուեցաւ եղեռնադատ ատեանին առջև, ու Ելտըզի կոմիսիոնը չխառնուեցաւ գործին։ Առաջին դատավարութեան ատեն իբրև ամբաստանեալ ներկայ էր միայն Կարապետ Վարդանեան, որ Միւլժանէթիքին [illegible] պէս ամեն բան ուրացաւ։ Սակայն ընդհ. դատախազը, նկատելով որ Կարապետ Վարդանեան զէնք արձակած էր և ատրճանակին մէջ քանի մը գնդակներ կը պակսէին, պահանջեց, որ ամբաստանեալը մահուան դատապարտուի՝ իբրև կանխամտածութեամբ ոճիր գործող։ Եւ արդարև Կարապետ Վարդանեան մահուան դատապարտուեցաւ։

«Երբ այս պատիժը տրուեցաւ իրեն, Նէջիբ Մէլհամէ երեան գալով պալատ կանչեց Վարդանեանը և ըսաւ, թէ մահուան պատիժը կրնայ ջնջուիլ, եթէ խնդիրը լուսաբանէ և ոճիրը քաղաքական կօմիտէի մը ղոմէ գործուած ըլլալը յայտնէ և գործակիցներուն անունները երևան հանէ։ Կարապետ Վարդանեան իր ընկերներուն կողմէ հաւաստիք ստացած էր, թէ քանի մը տարի Ամերիկա բնակած ըլլալուն համար՝ ամերիկեան քաղաքացիի իրաւունք ունի և եթէ մահուան դատապարտուի, ամերիկեան դեսպանին միջոցաւ կրնայ ազատ արձակուիլ, ինչպէս որ այս սպանութենէն տարի մը առաջ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան պետ Արզուեան Պոլիս եկած և ձերբակալուած ըլլալով ամերիկեան դեսպանին միջամտութեամբ ազատ արձակուած էր։ Կարապետ Վարդանեան այս հաւաստիքներուն վրայ շարունակած էր իր ուրացումները, բայց երբ բանտին մէջ բաւական օրեր սպասելէ ետք դեսպանատան ներկայացուցիչի մը այցելութիւնը ընդունելէ յոյսը կտրեց, Նէջիբ Մէլհամէին առաջարկը ընդունելով ամեն բան իր իսկութեան մէջ պարզեց և այս անգամ դարձեալ եղեռնադատ ատեանին զրկուեցաւ Աֆարեան անուն ընկերոջ, ինչպէս նաև Երուանդ Զավուշեան էֆէնդիի, մաքսային պաշտօնեայ Ստեփան և սափրիչ Սիմոն աղաներու հետ։

«Դատարանին առջև Կարապետ Վարդանեան յայտարարեց այսպէս։ Ինք Ամերիկայի մէջ գործաւոր մէկը ըլլալով և քաղաքական կուսակցութեան մը անդամ գրուելով, Պոլիս ղրկուած էր՝ իրեն համար անծանօթ նպատակ մը գործադրելու պաշտօնով, այն ապահովութեամբ, որ երբ Ղալաթիոյ քարափը ելլէ, իրենց ընկերներէն Վարազդատ զինքը պիտի դիմաւորէ։ Այս Վարազդատը այժմ Թիւրքիոյ մէջ է և բուն անունը գիտենք, բայց հարկ չենք տեսներ իր մասին բան մը գրել։ Իրաւ ալ, Ղալաթիոյ քարափին վրայ, Վարազդատ դիմաւորեց Կարապետ Վարդանեանը և ներկայացուց զայն Լեւոն Լարենցի, որ նորեկը տարաւ Պերա, Եէնի Շէհիր, սափրիչ Սիմոն աղայի տունը, մաքսային պաշտօնեայ Ստեփան աղայի միջնորդութեամբ և պարբերաբար այցելեց իրեն ու դրամական պէտքերը հոգաց, տանը վարձքը վճարելով և այլն։ Ետոյ, Լեւոն Լարենցի ցուցմունքներուն վրայ, Կարապետ Վարդանեան ճանչցաւ Աբիկ Ունճեանը, որուն հետ ոևէ ծանօթութիւն և յարաբերութիւն չունէր։ Անկէ վերջ է որ Աբիկ էֆէնդիէն դրամ պահանջուեցաւ, և այս պահանջը անպատասխանի մնացած ըլլալով՝ Կարապետ Վարդանեան զարկաւ սպաննեց Աբիկ Ունճեանը։ Աֆարեան ալ իրեն հետ եկած էր կուսակցութեան նպատակը յաջողցնելու համար։ Սափրիչ Սիմոն դատարանին առջև յայտարարեց, թէ իր տան մէջ վարձու սենեակ կար, Ստեփան բերաւ և իրեն ներկայացուց Կարապետ Վարդանեանը։ Իսկ մաքսային պաշտօնեայ Ստեփան յայտարարեց, թէ այս մարդը (այսինքն Կարապետ Վարդանեանը) ճանչցած է Լեւոն Լարենցի միջոցաւ և թէ անոր ինչ նպատակի համար Պոլիս գալը չի գիտեր։ Դատարանին կողմէ հարցուեցաւ, թէ իրենք ոևէ յարաբերութիւն ունեցած են Երուանդ էֆ. Զավուշեանի հետ և կը ճանչնան զայն։ Պատասխանեցին, թէ առաջին անգամ ըլլալով դատարանին մէջ կը տեսնեն զայն, և հետևաբար փաստ և ապացոյց չգտնուելով, նոյն օրն իսկ Զավուշեան էֆ. անպարտ արձակուեցաւ։ Բայց որովհետև Նէջիբ Մէլհամէ կասկած ունէր Զավուշեանէ, թէ հելլէն դեսպանատան քավազին միջոցաւ Պոլսէն մարդ փախցնելու գործին մասնակից է, և իր մէկ այցաքարտը գտնուած է Եըլդըզի դէպքին մէջ ամբաստանուած Վռամ Քէնտիրեանի տունէն, թոյլ չտուաւ որ Զավուշեան բանտէն արձակուի։ Թէ Կարապետ Վարդանեան, թէ Ստեփան և թէ Լարենց եղեռնադատ ատեանին կողմէ զանազան պատիժներու դատապարտուեցան։

«Հետևաբար, Լ. Լարենցի վրայ ծանրացած ամբաստանութիւնը իր կուսակցական ընկերներուն կողմէ դատարանին առջև եկած է։ Անկէ զատ, Պոլսէն Եգիպտոս փախչելէ ետք, Լ. Լարենց ինք անձամբ յայտարարած է թէ Աբիկ Ունճեանը իրենք սպաննած են, ինչպէս պատմեցին մեզ Եգիպտոսէն եկող անձնաւորութիւններ և աւելցուցին, թէ այս յայտարարութիւնը շատ յոռի տպաւորութիւն առաջ բերաւ Եգիպտոսի հայկական շրջանակներուն մէջ։ Կարապետ Վարդանեանին հաղորդած մանրամասնութիւններէն ալ որոշապէս յայտնի եղաւ, թէ իր Պոլիս բնակած միջոցին ամբողջ ծախքերը հայթայթուած և ոճրին պարագաներուն կողմը լուսաբանութիւններ տրուած են Լեւոն Լարենցի կողմէ։

«Սահմանադրութեան հրատարակուելէն ետք, երբ Կարապետ Վարդանեան բանտէն արձակուեցաւ, իրեն հետ տեսակցողներուն կըսէր, թէ ինք Ունճեանի հետ ոևէ ծանօթութիւն չունէր, իրեն ըսած էին, թէ անիկա ազգին վնասակար մէկն է, ու սպաննեց։ Անկէ զատ, յայտարարեց, թէ ամենասերտ յարաբերութեան մէջ էր Լ. Լարենցի հետ, որ ոևէ կերպով չբողոքեց այս յայտարարութիւններուն դէմ։

«Եթէ Վարդանեան չէր ճանչնար Ունճեանը, գոնէ Լ. Լարենց լաւ կը ճանչնար և պէտք էր արգիլէր այդպիսի ոճիր մը, որովհետև իբրև խմբագիր գիտէր, թէ Աբիկ Ունճեան ազգանուէր ու բարենպատակ ամեն գործի սատարած էր մեծամեծ նըպաստներով և նոյնիսկ արտասովոր դատաբանի մը առջև պաշտպանած էր հայութեան պատիւը, իբրև հարազատ հայորդի։

«Ահա իրողութիւնը այս է իր իսկութեան մէջ։ Գոնէ մենք այսպէս գիտենք։ Եթէ այս պատմութեան մէջ խեղաթիւրումներ կան, մենք պատրաստ ենք ուղղելու, միայն թէ հաստատ ապացոյցներ կը պահանջենք։

«Լեոն Լարենցի առջև բաց են մեր սիւնակները։ Կրնայ ինքզինքը արդարացնել հանրային ատեանին առջև, և մենք առաջինը պիտի ըլլանք ուրախացող, եթէ կարենայ հաստատել, թէ ինք ոևէ մասնակցութիւն ունեցած չէ գարշելի ոճիրի մը մէջ, ինչպէս է հէք Աբիկ Ունճեանի սպանութիւնը»։

Խորհրդածութիւնները միանգամայն աւելորդ են։ Եթէ «Հորիզոն» իր էջերը այս տեսակ ոճրագործներու տրամադրելով է որ պիտի պայքարի «Մշակի» դէմ, շատ խեղճ է ու ողորմելի, և միայն արգահատանքի արժանի։

Շառայլ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԸ

Համեմատաբար ճիշդ տեղեկութիւնների համաձայն, բուլղարական զօրքը խաղաղ ժամանակ կազմում է 57,000 մարդ, պատերազմի ժամանակ՝ 350,000։

Սերբիական զօրքը խաղաղ ժամանակ ունի ընդամենը 32,000, պատերազմի ժամանակ՝ մինչև 180,000, 600 թնդանօթներով։

Չերնոգորական զօրքը բաղկանում է 4 զօրաբանակից 45,000 մարդով ու 148 թընդանօթով։ Բացի դրանից կան պահեստի գնդեր։

Ռումինական զօրքը բաղկանում է 95,000, պատերազմի ժամանակ կազմում է 300,000 մարդ։

Յունաց զօրքը հաշւվում է խաղաղ ժամանակ 30,000 զինւոր, պատերազմի ժամանակ՝ մօտ 300,000 մարդ։

Չերնոգորիայի զօրքի պահպանման համար Ռուսաստանը ամեն տարի իր կողմից տալիս է 650,000 ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՈՆԴԻ

Վերջին ցուցակով (տես «Մշակ» № 169) ստացված էր ընդամենը 28,147 ր. 17 կ.։ Այնուհետև ստացվել են խմբագրութեան մէջ՝ 1) Կ. Պոլսից, Շառայլից 2 օսմ. ոսկի կամ 18 ր., 2) Ախալքաղաքից, Յակոբ Առուշանեանից 5 ր., 3) Ջավա կղզու Սուրաբայա քաղաքից, տեղական հայ գաղութի մէջ հանգանակված՝ Հ. Տէր-Յակոբեանի միջոցով՝ 20 ֆ. ստերլ. 6 շիլ. 4 պէնս կամ 192 ռուբ. 20 կ., 4) Ջավա կղզու Բանդունգ քաղաքից, նոր-Ջուղայեցի հայերից 108 ֆր. 55 սան. կամ 40 ր. 70 կ., 5) Ջավա կղզու Բատավիա քաղաքից, Հայ ազգային հաստատութեանց Ցանձանձանաց Սառենից 10 ֆ. ստերլ. կամ 94 ր. 50 կ., 6) Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. Շամշադինի ճիւղից 5 ր., 7) Քութայիսից, Ա. Մուրադեանից 5 ր., 8) Ղարաքիլիսայից, ուսուցիչ Մանուկ Ղազարեանի միջոցով, այդտեղ տրված ներկայացման արդիւնքից 52 ր. 48 կ.։ Գումարն է 412 ր. 88 կ.։ Ընդամենը 28,560 ր. 05 կ.։

ՅՕԳՈՒՏ «ՊԷՊՕՅԻ» ԱՐՁԱՆԻ

«Մշակի» № 186-ի մէջ տպված հաշւի համաձայն ստացել էինք մինչև այդ օր 489 ր. 20 կ., այնուհետև ստացել ենք 1) բժշկ. Բ. Նաւասարդեանից, Ամերիկայից Մ. Նշկեանի ուղարկածը (տես «Մշակ» № 160) 50 ր. 14 կ., 2) Ղարաքիլիսայից, ուսուցիչ Մ. Ղազարեանի միջոցով, նախաձեռնութեամբ տանուտէր Ռոստոմեանի հանգանակվածը՝ 26 ր., գումարն է 76 ր. 14 կ., որով մինչև այժմ ստացված է ընդամենը 565 ր. 34 կ.։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԱՌԻԹՈՎ

Վաղուց է, ինչ հրապարակի վրա են դըրված դպրոցական և գրական ֆոնդ հիմնելու հարցերը։

Եւ կարծէք թէ ընթերցող հասարակութիւնը չէ բաւականացել վերոյիշեալ խնդիրների վերաբերեալ անտեղի բանակռիւներով, ահա այսօր կրկին մի աւելորդ անգամ ևս վէճի տեղիք է տալիս Վ. Թումանեանը «Մշակի» № 188-ում «Ընթերցողի յիշատակարանից» խորագրով իր յօդուածում առաջարկած հրատարակչական ֆոնդով։

Հայ տպագրութեան 400-ամեակի և տառերի գիւտի 1500-ամեակի տօնը կարելի է նմանեցնել Կրիլովի «Կարապը, ձուկն ու խեցգետինը» առակում յիշված սայլին, որին զանազան ուղղութեամբ քաշ էին տալիս, բայց սայլը կրկին իր տեղն էր մնում։

Այսպէս է և մեր համազգային տօնը. ցանկութիւն ենք յայտնում զանազան ֆոնդերով յաւերժացնելու, բայց, ինչպէս երևում է, և ոչ մի բանով չենք կարող մեծարել տօնը, որովհետև հասարակութիւնը ոչ մի ֆոնդի առաւելութեան վրա չէ շեշտում այնպէս, ինչպէս որ հարկաւոր է։

Մեր համեստ կարծիքն է բաւականանալ միմիայն դպրոցական ֆոնդով և ույժ տալ այդ գործին, մանաւանդ որ էջմիածնի Յօբելեանական Յանձնաժողովը այդ առիթով արդէն դիմել է կառավարութեանը՝ պատշաճ թոյլտուութիւն ստանալու համար։ Իսկ ինչ վերաբերում է պնդելուն գրական կամ հրատարակչական ֆոնդի առաւելութեան վրա՝ պէտք է ասենք, որ դա նշանակում է զուր տեղ ջուր ծեծել և անտեղի վէճերով զբաղվել. մի բան՝ որ ցանկալի չի լինի և ոչ ոքի համար, մանաւանդ որ դրանով կարող ենք նսեմացնել միմիայն տօնի վեհ նշանակութիւնը և հնարաւորութիւն չենք ունենայ միահամուռ ույժերով յաւերժացնելու սրբազան տօնը։

Բայց թէ ինչու անպատճառ գերադասութիւն տալ դպրոցական ֆոնդին, դրա մասին աւելորդ ենք համարում խօսել, ի նկատի ունենալով որ բոլորիս համար պարզ պէտք է լինի, որ վերջապէս ժամանակ է լրջօրէն մտածելու անգրագէտների այն սոսկալի խմբերի մասին, որոնք տառապում են խաւարի մէջ։

Ունեցանք դպրոցներ՝ կունենանք և գրագէտ հասարակութիւն, որից և կը բղխի գրականութեան պահանջը։

Թագա-գիւղ Աստ. Վարդանեան

ՅԱՆՑԱՆՔԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

„Преступленіе есть протестъ противъ ненормальности соціальнаго устройства“.

Достоевскій

Մարդկութիւնը շարունակ ձգտում է դէպի լաւագոյն կեանք, երջանկութիւն, բարօրութիւն։ Մարդը ստեղծված է աշխարհում, որ ապրէ բաղդաւոր, երջանիկ, քանի կենդանի է։ Կարճ է մարդուս կեանքը, յաւիտենական չէ նրա հոգեղէն գոյութիւնը և նա պէտք է վայելէ աշխարհիս բոլոր վայելչութիւնները և վերջը հրաժեշտ տալով կեանքին՝ գնայ յաւիտենական հանգստարանը...

Սակայն դժբաղդաբար այդպէս չէ մեր ներկայ կեանքը։ Մեր կեանքը լի է տանջանքներով, չարչարանքներով, նեղութիւններով։ Կարծես թէ ներկայ մարդկութիւնը ստեղծված է ոչ թէ երջանկութեան համար, այլ տանջանքի, տառապանքի համար։ Երջանկութիւնը փոքրամասնութեան համար է. մեծամասնութիւնը տնքում է վշտերի և արտասուքների մէջ։ Ապրիր 50—60 տարի միշտ հոգսերի մէջ, չարչարվիր, տանջվիր և վերջը վշտերով իջիր գերեզման...

Եւ մարդկութեան ամենամեծ բարերարները ձգտում են սահմանել, ստեղծել այնպիսի կեանք, որ մարդը, քանի կենդանի է, ապրէ երջանիկ և բաղդաւոր։ Ճիշդ է, հեռաւոր ապագայի գործն է դա, բայց ամենանուիրական և սրբազան իդէալն է, որին պէտք է ձգտել, փայփայել, գգվել։

Երջանիկ և բաղդաւոր ապրելու համար անհրաժեշտ է փոխել մարդուս տնտեսական վիճակը, ստեղծել աւետարանական սէր և հաւասարութիւն, բարձրացնել մարդու բարոյական դրութիւնը, որ մարդն ազատ լինի ոճիրներից, յանցանքներից և լինի կատարեալ բարոյական մարդ։

Նիւթական վիճակի բարւոքման նպաստում է ալտրուիզմը, բարոյականութիւնը։ Որքան մարդը բարոյական է, այնքան նա կարեկից է դէպի թշուառները, ազատ է մոլութիւններից, բարեխիղճ է, արդար։ Բոլոր չարութիւնները, ոճիրները, յանցանքները բղխում են անբարոյական մարդկանցից։

Հետևապէս երջանիկ ապրելու համար մեր կեանքը պէտք է ստանայ այնպիսի ուղղութիւն, որ ոճիրները, յանցանքները չքանան աշխարհից։ Ջնջուելի է յանցանքը. պէտք է արմատախիլ անել ոճիրը, որպէսզի աշխարհում թագաւորէ երջանկութիւն և անդորրութիւն, իսկ ոճիրները, յանցանքները պէտք է արմատախիլ անէ ինքը հասարակութիւնը։

Յանցանքը, ըստ Դոստոեվսկիի, մեր կեանքի աննորմալ երևոյթն է. յանցանքը բողոք է սօցիալական հասարակական կազմակերպութեան դէմ։ Որքան հասարակութիւնը բարոյական է, որչափ նա քաղաքակրթված է, այնքան ոճիրներ նրա մէջ քիչ են կատարվում։ Ամենքս գիտենք, որ լուսաւոր Եւրոպայում յանցանքներ, ոճիրներ քիչ են կատարվում, քան թէ մեր ասիացիներիս մէջ։ Եւ այս այն պատճառով, որ մենք կուլտուրայով շատ և շատ ցածր ենք կանգնած քաղաքակրթված եւրոպացիներից...

Հասարակութիւնը պէտք է բողոքէ ոճիրների դէմ, հասարակութիւնը պէտք է պատժէ յանցաւորներին, որ ուրիշները չը համարձակվեն յանցանք գործել։ Քանի խիստ կը լինի հասարակութիւնը դէպի յանցաւորները, այնքան յանցանքներ քիչ տեղի կունենան. թուլութիւնը, սառնասրտութիւնը աւելի բազմացնում են յանցանքները։

Տեղի է ունեցել մարդասպանութիւն։ Ի հարկէ պէտք է խիստ պատժել յանցաւորին։ Բայց դուրս են գալիս մարդիկ, որոնք սուտ վկայութիւններով դատարանում կամենում են յանցաւորին արդարացնել։ Այդ բաւական չէ, եղել են դէպքեր, երբ հասարակութիւնը մարդասպաններին ծածկել է և չէ յանձնել արդարադատութեան ձեռքը։

Պատահել է գողութիւն։ Գողին պէտք է բռնել և պատժել։ Բայց լինում են դէպքեր, երբ գողերը չեն բռնվում և անպատիժ են մնում։ Եթէ գողը հաստատ համոզված լինի, որ ինքը բռնվելու է, այլ ևս գողութիւն չի անի. նա յոյս ունի, որ գուցէ ծածկվի և երկար ժամանակ գողութիւններ անի։

Մարդասպանութիւնը, գողութիւնը պատժվում են պետական դատարաններով, բայց կան յանցանքներ, որոնք ենթակայ չեն դատարաններին և կրում են միայն բարոյական նշանակութիւն։ Դրանք նոյնպէս զզուելի են և կազմալուծում, այլասերում են հասարակութիւնը։

Ահա ձեզ մի մարդ, որն իր ամբողջ կեանքն անց է կացնում արբեցողութեամբ։ Այդ մարդը դժուարութեամբ է հաւաքում կօպէկներ, տան ընտանիքը քաղցած, մերկ թողնում, իսկ ինքը գինետան մէջ Բաքոսին փառաբանում։ Հասարակութիւնը բարոյապէս չէ պատժում արբեցողներին, ներողամիտ է, սառնասիրտ, ուստի արբեցողութիւնը խոր կերպով տարածվում է ժողովրդի մէջ։

Ահա ձեզ մի մարդ, որ ամուսնացած է, ունի կին և զաւակներ, բայց անհաւատարիմ է դէպի իր ամուսինը և ուրիշ կանանց հետ սէր է հաստատում։ Հասարակութիւնը գիտէ այս, լռում է, չէ բողոքում և լռելով աւելի տարածում է պոռնկութիւնը։

Ահա ձեզ մի մարդ, որը համեստ կարողութեան տէր է, բայց զուարճասէր է, չափաւոր չէ ապրուստի մէջ, շռայլ, կարտօժնիկ, պճնասէր։ Նա վատնում է իր ունեցածն և աղքատանում։ Հասարակութիւնը տեսնում է այս և չէ բողոքում, այլ լռելով նպաստում է շռայլութեան, զեղխութեան, անչափաւոր կեանքին։

Եւ այլ անթիւ աննորմալ երևոյթներ։ Մեր կեանքը լի է անթիւ յանցանքներով, մեղքերով, որոնք բարոյապէս ապականում են մեզ և հեռու դարձնում երջանկութիւնից, որի համար ստեղծված ենք մենք։ Երջանիկ ապրելու համար պէտք է վերացնել ոճիրները, յանցանքները, մեղքերը։

Հասարակութիւնը խիստ պէտք է բողոքէ բոլոր աննորմալ երևոյթների դէմ, պէտք է պատժէ ոճիրը, յանցանքը, մեղքը, և սրանք կը չքանան կեանքից։ Լռելով, անտարբեր վերաբերվելով տարածում ենք, սաստկացնում ոճրագործութիւնը և յանցանքը։

Սովորենք բողոքել։

Սղնախ N. N.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հայ գաղութը սարսափի տակ

Սարայ (Ատրպատ. երկիր), 15 օգոստ.

Ջինիքօլ կոչված տեղում կան մի քանի հայ և պարսիկ առևտրականներ։ Դրանք տասնեակ տարիներ է, ինչ համերաշխ գործում էին տեղացի ժողովրդի հետ, բայց այդ համերաշխութիւնը ամսիս 10-ին խախտվեց, մի թեթև ընդհարում եղաւ առևտրականների և ժողովրդի միջև։

Դէպքը հետևեալն է։

Մի թիւրքմէն, չը գիտեմ ինչից դրդված, սկսում է մի հայի հայհոյել։ Հայը նոյնպէս պատասխանում է հայհոյանքով։ Սակայն շուտով հանգստացնում են երկուսին էլ։

Այդ դէպքի հետևեալ օրը շուկայում մի պարսիկ առևտրական իր ապառիկ տուած ապրանքի պարտքն է պահանջում, իսկ թիւրքմէնը իր պարտքը վճարելու փոխարէն բռունցք է ցոյց տալիս և մի քանի խօսք փոխանակելուց յետոյ՝ թիւրքմէնները բռնում են առևտրականին, ծեծում և գրպանից 960 ր. փողը վերցնում։ Ծեծողները մնում են անպատիժ, որովհետև այստեղի բէգը նոր է մեռել, և առ այժմ անտէրութիւն է տիրում։ Այդ հանգամանքը լաւ իմանալով՝ թիւրքմէնները սիրտ առած՝ շարունակում են իրանց վայրենութիւնը և սպառնում են, թէ ով իրանցից պարտք պահանջի, կը սպաննեն։ Նոյն գիշեր մի միրախոր (պաշտօնեայ) գալիս և յայտնում է հայերին, որ Ջինիքօլից հեռանան, թէ չէ վտանգ է սպառնում, իբրև թէ թիւրքմէնները ուզում են, որ հայ և պարսիկ առևտրականներին կոտորեն։ Հայերն էլ, ստիպված, խանութները կողպում և գալիս են ռուսաց մերձակայ պօստը և այնտեղից յայտնում են Սարայի կօմանդիրին, իսկ այստեղից էլ հեռագրով զեկուցում աւելի բարձր իշխանութեան։ Հետևանքի մասին դեռ ոչինչ յայտնի չէ։

Հ. Գ.

Նմուշներ ապականված բարքերից

Շնող գիւղ, 28 օգոստոսի

Գիւղական կեանքի մէջ գոյութիւն են ունեցել և ունեն իրանց բնաւորութեամբ այնպիսի խայտառակ և վարկաբեկող երևոյթներ, որոնք՝ թէև արդիւնք լինելով մարդ-գազան անհատների ապականված բարքերի՝ ոչ մի կապ չեն ունենում ընհանուրի հետ, սակայն նրանք իրանց սարսափելի այլանդակութեամբ կարողանում են արատաւորել ամբողջ հասարակութեան պատիւն ու անունը և թունաւորել նրա կեանքը...

Յիշեալ տեսակ և միևնոյն ժամանակ ամենազզուելի երևոյթներից մէկն էլ «ոխակալութեան», կամ աւելի լաւ է ասել՝ հարևանից «ձիգը» հանելու յատուկ նպատակով նրա տնտեսութեան «մէկ կամ միւս մասը գիտակցաբար ոչնչացնելու, չգոյութեան մատնելու» դատապարտելի սովորութիւնն է, որ տարաբաղդաբար դեռ ևս գոյութիւն ունի մեզնում...

Մեր գիւղացի Յովհ. Տէր-Բար-նը հունձը վերջացնելով ցորենի խուրձը (1800 խուրձ) կրել էր գիւղ և կալում դէզեր կանգնեցրել մի քանի օրից կալսելու։

Բայց նրան այդ չէ աջողվում։ Մի գիշեր անյայտ մարդու մէկը վառում է այդ դէզերը, և շնորհիւ այդ ժամին բարձրացած քամու՝ կրակը բռնկվելով արագապէս տարածվում է դէզերի շուրջը և կարճ միջոցում այրում մինչև վերջին խուրձը, սովի մատնելով մի ամբողջ ընտանիք...

Կրակի կատաղի բոցերի անսովոր լոյսից և այրվող պտղալից հասկերի ճռճռթոցից յանկարծակիի բերված գիւղացիները թէև շուտով հաւաքվում են օգնելու, բայց հըրդեհը հանգցնել նրանց չէ աջողվում։

Մի խումբ գիւղացիներ, մտնելով վնասվածի անել դրութեան մէջ, օգնութեան են գալիս, տնից-տուն խուրձեր ժողովում և վնասի մի որոշ մասը ծածկում։

Իսկ «սիրտը հովացնելու» վայրենի կըրքից կուրացած սև հերոսը մինչև օրս էլ ազատ ման է գալիս, որպէսզի առաջիկայում ևս իր ապականված բարքով թունաւորէ հասարակութեան կեանքը, իսկ սողունային զզուելի արարքով դժբաղդութեան գիրկը մատնէ նման շատ ընտանիքներ...

Ո՞վ գիտէ, թերևս մի հատ խուրձն էլ նա լինի նուիրած իր վառած հրդեհից վնասվածի օգտին...

Այդ դէպքից մի օր յետոյ վառել են գիւղից դուրս գտնվող՝ Մկ.-Իս.-ի խոտի բլուրը, որը ի հարկէ նոյնպէս արդիւնք է «ձիգը» հանող տականքների արարքի։

Կալերը վերջանալու վրա են։ Հացի բերքը բաւարար է, իսկ այգիներինը չգոյութեան չափ անբաւարար։

Մեր գիւղին յատուկ տենդ հիւանդութիւնով բռնվածներ շատ կան։ Բժիշկ չը կայ. Ջուրը վատ, չոռոտ, միրգը առատ, եղանակը շոգ... Ահա մեր հիւանդների կեանքի պայմանը։

Բ. Մկրտումեանց

Եղջիւրաւոր անասունների հիւանդութիւն

Խանքենդ, 28 օգոստոսի

Մեր հարևան Կարկաժան գիւղում ահա մի քանի օր է, ինչ անասունների մէջ հիւանդութիւն է երևացել և գիւղում կարանտին է դրված։

Հիւանդութիւնը, ինչպէս ասում են, սարից վերադարձող թուրքերի անասուններն են բերել և վարակել։

Անասնաբոյժները շատ խիստ կերպով հըսկում են հիւանդ անասունների վրա։

Սակայն անասնաբոյժների մի քանի վարմունքը քիչ հակաօրինական է։

Այսպէս՝ մեզ պատմում են, որ անասուններին գալու տեսնելու համար վաղօրօք պատուիրում են գիւղացիներին անասունները հանդ բաց չը թողնել, և խեղճ անասունները առաւօտից մինչև կէս օր կամ երբեմն մինչև երեկոյ մնում են բանտարկված գիւղում՝ կիզիչ արևի տակ կամ մի գոմում, մինչև որ գալիս են անասնաբոյժները և սկսում իրանց բժշկական գործունէութիւնը։

Լաւ կը լինէր, եթէ մի որոշ ժամ նշանակէին և առանց ուշանալու գային տեսնէին, մանաւանդ բժշկական տեսակէտից հէնց անասունների միաժամանակ մի տեղ պահելը վնասակար է, որովհետև միասին կապված հիւանդ անասունից կը վարակվի և առողջը։

Մեր շրջանի հաշտարար միջնորդ Խարտախայը ահա մի քանի օր է, ինչ շրջում է գիւղերը և Պետական Դումայի պատգամաւոր ընտրելու համար գիւղացիներից պատուիրակներ ընտրում։

Գիւղացիները, պէտք է ասել, Պետական Դումայի անցեալ գործունէութիւնից ոչ մի տեղեկութիւն չունեն և նոր Դումա ընտրելու վերաբերմամբ հետաքրքրութիւն չեն ցոյց տալիս։

Սեպուհ

Մեր ժողովրդի նեղ կացութիւնը

Ջաքաթալա, 1 սեպտեմբերի

Երկնքի արհաւիրքներից աչք չէ բաց անում մեր խեղճ ու կրակ ժողովուրդը. մինչև այժմ նա նեղվում էր, տանջվում էր անբերրիութեան ճիրաններում, իսկ այժմ մի նոր անտանելի ցաւ եկաւ մոռացնել տալու այդ ամենը։ «Ջումա» կոչված համաճարակը երևան եկաւ մեր շրջանում և, թէև առայժմ շատ կոտորածներ չէ անում տաւարի մէջ, այսու ամենայնիւ սպառնում է գիւղացու տուն-տեղը հիմն ի վեր քայքայել... Իշխանութիւնը անգործ չէ, ամեն կերպ աշխատում է առաջն առնել. հրաւիրված են կրկին մի քանի անասնաբոյժներ։

Աւազակային խումբն էլ անգործ չէ. մի օր առաջ յարձակում գործելով Բելաքան գիւղում մի տան վրա, թալանում ու ծանր կերպով վիրաւորում են տանտէրին։ Մեր շրջանի հարևան գաւառների իշխանութիւնները օգնութեան են գալիս՝ այդ հրէշածին մարդ-գազաններին ոչնչացնելու։ Ամարանոց եկողները վերադարձան իրանց բնակավայրերը անվտանգ։

Սօյլադէ

Ծխ. դպրոցի խղճալի վիճակը

Նովօրոսիյսկ, 27 օգոստոսի

Մեզանում արդէն սկսվել են դպրոցական վերաքննութիւնները և նոր աշակերտների ընդունելութիւնը քաղաքային և պետական դպրոցական հաստատութիւններում։

Միայն մեր խեղճ ու աղքատ հայ երեխաներն են, որ անհամբեր սպասում են դպրոցի բացվելուն. բայց դեռ մեր դպրոցը ամուր կողպված է, հոգաբարձութիւնը խոր քնի մէջ է ընկղմված, իսկ հասարակութեան մեծ մասն էլ սրճարաններում դօմինոյից և նարդիից գլուխ չէ հանում, որ կամ ժողովի մասնակցի կամ դպրոցի համար մտածի։

Նովօրոսսիյսկը 120 ծուխ հայ և մօտաւորապէս 1200 հայ բանւոր ունի. քաղաքիս առաջնակարգ վաճառականները, կարելի է ասել, հայերն են, և այսպիսի մի հայկական գաղութում ուզում են դպրոց չունենալ և ընդմիշտ փակել։

Բայց ի՛նչ կասեն մեր քաղաքի օտարազգիները, մանաւանդ կազանեան թաթարները, որոնք թւով 50 տուն հազիւ լինեն քաղաքումս, և բոլորն էլ գրեթէ մշակութեամբ են պարապում, սակայն և այնպէս դպրոց են պահում։ Իսկ հազարներ ունեցող հայերն իրանց դպրոցը փակում են, որի տարեկան ընդհանուր բիւջէն մի չնչին գումար է։ Եւ այսպէս՝ Նովօրոսսիյսկի հայ գաղութի 35—40-ի չափ երեխաները փողոցներում պիտի թափառեն։

Դպրոցի հոգաբարձութիւնը 2 տարի է, ինչ ընտրվել է, բայց ոչինչ չէ արել դըպրոցի համար. և դեռ այնպիսի հոգաբարձու էլ ունենք, որ մինչև անգամ չը գիտէ, թէ ո՛ր փողոցի վրա է գտնվում դպրոցը։ Երկու տարվայ ընթացքում հոգաբարձական ոչ մի ժողով չեն ունեցել, որ բարելաւեն դպրոցը։

Դպրոցի գոյութիւնը փաստօրէն պահպանում էին մի քանի երիտասարդներ՝ ժողովելով փողերը, ծածկելով դպրոցի ծախսերը և մաքուր հաշիւ ներկայացնելով հոգաբարձուներին։ Բայց դժբաղդաբար այդ երիտասարդներն էլ հեռացել են քաղաքից և այժմ դպրոցը մնացել է փակման վտանգի առաջ։

Հմ. Մակարեան

Գիւղական կեանքը Ճօճկանում

Ճօճկան (Բորչ. գաւառ), 24 օգոստոսի

Կէս վերստ հեռաւորութիւնից, գիւղի արօտատեղից գիշերով անյայտ մարդիկ գողացել են մէկ ձի և երկու եզ։ Ձին պատկանում է տեղացի Գրիգոր Մօսինեանին, իսկ եզները՝ Ադամ Խուլինեանին։ Ձիատէր Մօսինեանը վերին աստիճանի չքաւոր մարդ է, որի խուրձերի մի մասը հանդումն է մնացել, իսկ միւս մասը տան դանը անկալսել, որովհետև կորած ձին խեղճ Մօսինեանի յոյսն ու ապաւէնը, տան կարիքը հոգացող և նրա բազմանդամ տուն պահպանողն էր, որից զրկվելով խեղճ գիւղացին՝ այժմս տանից-տեղից ձեռք քաշած՝ իր կօրուստի ետևից ընկել է սար ու ձոր։ Գողերը դեռ ևս ձերբակալված չեն։

Տեղացոց մի մասը կալից թեթևացել է, միւս մասն էլ, օգտվելով եղանակների նըպաստաւոր լինելուց, աշխատում է մի կերպ վերջացնել, բայց դեռևս երկար ժամանակ կը տևէ։ Սաստիկ շոգերը և անձրևների չը գգալը մեզանում դեռ ևս շարունակվում է։ Շոգերը թէև մի կողմից նպաստաւոր են, որ տեղացիք շուտ և հովով կը վերջացնեն կալերը, բայց միւս կողմից շատ վնասակար, որովհետև այսպիսի եղանակների հետևանք կը լինի այն, որ մեզանում լոյս կընկնեն տարափոխիկ զանազան հիւանդութիւններ, ինչպիսին է այժմս մեզանում փորհարինքը։

Թէև տարին մեզ համար առատ եկաւ, բայց և այնպէս տեղացիք դրա փոխարէնը մինչև օրս չը տեսնված նորութիւնով վարձատրվեցին։ Այդ այն էր, որ տեղացիք մինչև օրս չը գիտէին ինչ բան է խոտի բահրա (տուրք), բայց այս տարվայ առատութիւնը եկաւ աւելացնելու խոտի բահրան, որ և դարձաւ մեզ համար նորութիւն և մեծ քանակութեամբ խոտ ժողովվեց կառավարչի դուռը։

Տեղացոց հացի առատութեան ձայնը հասել է ամենքի ականջին. ամեն մի գիւղից, ամեն մի ձորից ու անկիւնից զանազան ազգութեան պատկանող անհատներ մի որևէ փոխառութեան իր կամ առարկայ վերցրած՝ ամեն օր դիմում են դէպի Ճօճկան։ Տեղացոց ևս այդքանը բաւական է. ամեն կողմից ամենայն արագութեամբ հաւաքվում են՝ ցորեն, գարի խոստանալով մի ակնթարթում վերցնում են։ Եւ այդ կրկնվում է շարունակ, ամեն օր և ամեն տարի, առաւել ևս առատութեան տարիներում, կալերի սկզբից մինչև աշուն։ Եւ այդ քայլը անում են ամենը, նաև նրանք, որոնք անցեալ ձմեռ շաբաթներով, մինչև անգամ ամիսներով քաղցած էին մնում տանը մի կտոր հացի կարօտ։

Տեղիս ծխ. դպրոցի հարցը դեռ ևս հէնց այնպէս մնում է. հոգաբարձուները իրանց գործերով են զբաղված։ Հոգաբարձութիւնը իր կողմից մինչև օրս դեռ ևս ոչ մի կարգադրութիւն չէ արել։ Բայց չէ՞ որ 1912/13 ուսումն. տարին արդէն մօտ է, ուսուցիչ հրաւիրելու և նրա մասին հոգ տանելու ժամանակն է։

Կայծօն Շքեղեան

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Նոր-Բայազէտ, 27 օգոստոսի

Ի նշան Հայրենական պատերազմի տարեդարձի՝ օգոստոսի 25/26-ին տեղիս եկեղեցիներում հոգեհանգստեան մաղթանքներ կատարվեցին՝ թէ ռուս և թէ հայ հոգևորականութեան նախաձեռնութեամբ։

Քաղաքի կառավարչական հիմնարկութիւնները, խանութները և նշանաւոր փողոցների վրա գտնվող տները կիրակի օրը, օգոստոսի 26-ին, զարդարված էին դրօշակներով, իսկ երեկոյեան տեղի ունեցաւ լուսաւորութիւն՝ քաղաքային այգում, ուր նուագում էր սազանդարների խումբը, որի ներդաշնակութեամբ և ահագին ժողովրդի մասնակցութեամբ՝ պարում էին երիտասարդներ և ուրախանում։

Պարերին ականատես էին նաև պաշտօնական անձինք։ Սակայն տեղական ժողովրդի մեծամասնութիւնը տեղեակ չէր այդ օրվայ նշանակութեան մասին առանձնապէս. միայն գիտէր, որ օրը կիրակի է և տօն կամ ինչպէս ընդունված է ասել՝ «պրազնիկ էր», հետևապէս օրվայ նշանակութեան մասին գաղափար չունէր։

Ս. Ե. Ա.

II

Մերվ, 28 օգոստ.

Ամսիս 26-ին տեղիս բոլոր զբօսատեղերը, ինչպէս և փողոցները զարդարված էին գոյնզգոյն լապտերով ու փոքրիկ դրօշակներով։ Մեր կեղտոտ Մերվը բոլորովին կերպարանափոխվել էր։ Այդ օրը թէ քաղաքային այգին, թէ սինեմատօգրաֆը և թէ կլուբը ձրիաբար տրամադրված էր հասարակութեանը, այնպէս որ տեղացի ժողովուրդը թափվել-լցրել էր այդ հաստատութիւնները։

Հասարակական կլուբում նուագում էին երկու հայ սազանդարներ հայկական ու եւրօպական պարեր. պարում էին կանայք, տղամարդիկ ու օրիորդներ. իսկ մէջընդմէջ նուագում էր զինւորական նուագախումբը։ Երբեմն-երբեմն հրիթաներ էին բաց թողնում։ Զբօսանքի սկիզբն էր երեկոյեան ժամը 8-ին և վերջացաւ գիշերվայ ժամը 2-ին։ Հասարակութիւնը ուրախ տրամադրութեան տակ հեռացաւ։

Նոյն օրը գոհաբանական մաղթանք կատարվեց տեղիս ռուսաց տաճարում։

Վ. Յովակիմեան

ԴԱՐՁԵԱԼ ԳԱՆՁԱԿԻ ԴՊՐՈՑԻ 50-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» այս տարվայ յունիսի 27-ի № 138-ում առաջ բերելով Մատթէոս I կաթողիկոսի 1862 թ. յունիսի 29-ի յանուն Գանձակի հայ հասարակութեան տուած կոնդակը, առաջարկել էի Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցի հոգաբարձութեանը փառաւոր կերպով տօնել դպրոցի 50-ամեայ յօբելեանը։

Իմ այդ առաջարկութիւնը նախ քան «Մշակում» լոյս տեսնելը՝ ես մի այլ յօդուածով—տպված «Հովիւ» № 15-ում—առաջարկում էի 50-ամեակը փառաւոր կացուցանելու համար ֆոնդ կազմել, որի տոկոսներով դպրոցի բազմաթիւ չքաւոր աշակերտները կարողացած լինեն ձրի ուսում ստանալ. ֆոնդի համար ես որպէս նախկին սան իմ սուղ միջոցներից նոյն թերթում խոստացել եմ նուիրել 10 րուբլի։

Դպրոցի առաջադիմութիւնը և նրա յարատև գոյութիւնը իմ սրտին մօտ լինելով՝ ես, ինչպէս «Հովիւ» № 15-ում խոստացել էի, ապրիլի 30-ին № 13 յայտարարութեամբ առաջ բերելով «Հովւում» տպագրվածը՝ դիմել էի նոյն հոգաբարձութեան, խնդրելով ըստ կարելւոյն փութով բարեհաճել յայտնել ինձ, թէ խոստացածս 10 րուբլի նուիրագրամը, որը պիտի մնայ անձեռնմխելի, ե՞րբ եւ ո՞ւմ պիտի ներկայացնեմ, աւելացնելով վերջում և այս խօսքերը. «Սիրում եմ յուսալ, որ դպրոցի բարգաւաճման նախանձախնդիր հոգաբարձուները ամեն ջանք ու ճիգ գործ կը դնեն ըստ ամենայնի փառաւոր կացուցանել դպրոցի գոյութեան 50-ամեայ յօբելեանը»։

Անցել է այդ օրից մօտ 4 ամիս, բայց, աւա՜ղ, դպրոցի ղեկավարները ոչ միայն չը բարեհաճեցին ստանալ ինձանից խոստացածս 10 րուբլին, այլ և զլացան մի երկու տողով անգամ պատասխանել ինձ և կոչ անել հեռաւոր վայրերում գտնվող գանձակեցիներին, որպէսզի սրանք իրանց լումաներով երախտահատոյց լինեն դպրոցին։

Իսկապէս զարմանալի երևոյթի ականատես լինելու է արժանանում մեր այս միջավայրը. հասարակութեան ծուծը կազմող անդամներից խմբված մի ըստ ամենայնի կարող մարմին յանձն է առնում կրել իր ուսերի վրա պատկառելի և պատասխանատու հիմնարկութեան ամբողջ ծանրութիւնը, բայց բաւականանում է միայն անպայման պատրաստի գումարներ գործադրելու հոգսով։ Նրան առաջարկում են դպրոցի քայքայված նիւթականի բարելաւման վստահելի միջոցներ, լռում է, առաջարկում են փող՝ լռում է... չը գիտենք ինչու։

Եւ վերջապէս մինչև ե՞րբ պէտք է մեր հոգաբարձուները՝ նման բազմաթիւ դպրոցների, իր նման բազմաչխատ ղեկավարների, պահպանէ խորին լռութիւն։

Առանց այդ էլ հասարակութիւնը թըլմբութիւնն է գերադասում հասարակական և դպրոցական գործերում։ Պէտք է վերջապէս մեր ժողովրդի ղեկավարները լըրջօրէն ինքնաքննութեան ենթարկեն իրանց՝ հասարակական գործում։

Վերջապէս քանի որ մեծապատիւ հոգաբարձուները մինչև օրս չը բարեհաճեցին հեռաւոր վայրերում գտնվող դպրոցի նախկին գանձակեցի սաներին—որոնք բարձրագոյն և միջնակարգ կրթութեամբ փայլում են զանազան հիմնարկութիւններում—կոչ անել ֆոնդին մասնակցելու, ուստի հոգաբարձութեան որոշումը (միայն արձանագրութեան թղթի վրա) 50-ամեակը տօնել սեպտեմբեր ամսին պիտի համարել ուշացած. մնում է մի ելք, որ հանդէսը ի պատիւ հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսի՝ կատարվէր առաջիկայ հոկտեմբերի 20-ին, շաբաթ օրը, որ օրը կատարվելու է ս. Աւետարանիչների տօնը։ Հոգաբարձութիւնը այդպիսով նախ միջոց կունենայ իր կոչերով դիմելու հեռաւոր գանձակեցիներին և երկրորդ յաւերժացրած՝ հանգուցեալ Վեհի յիշատակը։ Յուսամք և էլի սպասենք։

Գարեգին Ք. Թումանեան

Գանձակ, 24 օգոստոսի

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԱՌԱՏՈՒԹԻՒՆԸ ԼՕՌՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր շրջանի գիւղացին այսօր գոհ է իր վիճակից. նա գոհ է, որովհետև հացի հորը, որը շատ տարիներ դատարկ էր մնում, այս տարի, շնորհիւ առատ բերքի, լցված է։ Նրա դէմքին այսօր տեսնում էք ժպիտը։

Իսկապէս, ինչքան էլ որ աջող լինի մեր գիւղացու անասնապահութիւնը, ինչքան էլ որ լաւ մեղր ստանայ նա իր մեղուանոցից, ինչքան էլ որ շատ աշխատանք առած լինի նա երկաթուղու վրա, հանքերում, քաղաքում կամ որևէ ուրիշ գործի մէջ, որոնք անպայման նպաստում են նրա տնտեսական բարելաւման, նա այնքան գոհ չի լինի իր վիճակից, ինչքան այն դէպքում՝ երբ նրա ցանած արտը, որի վրա գիւղացին գիտէ թափել ույժ ու քրտինք, ծածկված է լինում ալեծածան, ոսկէգոյն տաւուղ հասկերով։ Այս դէպքում նա չը գիտէ յոգնել, չը գիտէ թէ ինչ է քունը և օր ու գիշեր աշխատում է արտում կամ կալում՝ մինչև որ բոլորովին պրծնի, ներս առնի իր «ապրուստը»։

Կայ արդեօք գիւղացու համար ուրիշ բաղդաւորութիւն, քան ունենալ հաց, հաստատապէս իմանալ, որ մի ամբողջ տարի, գուցէ և աւել, էլ չէ գնալու ուրիշի դուռը... ձեռք չէ մեկնելու ուրիշին հացի համար...

Այս բաղդաւորութեանն է արժանացել մեր շրջանի գիւղացին այս տարի բացառութեամբ մի քանի գիւղերի, որոնց սահմանները մասամբ ենթարկվեցին կարկտահարութեան։ Մեր գիւղացու կարծիքը, թէ այս տարի հացը վատ կը լինի ապրիլի անսպասելի ձիւնի և ցրտերի պատճառով, դուրս եկաւ բոլորովին հակառակը։ Յիշեալ ցրտերը իսկապէս զրկեցին այգիների պըտուղից և վնասեցին այն մեղուանոցներին, որոնք գտնվում էին անտառի մէջ և բերք էին ստանում լորի ծառից (վերջինիս ծաղիկը ցուրտը բոլորովին փչացրեց)։ Մեր գիւղի մեղուատէրերի մօտ մեղրի բերքը տարբեր էր. օրինակ՝ երկու իրար կողքի դրած մեղուանոցներից մէկը միջին թւով մի ընտանիքից ստացաւ 35 ֆունտից մինչև 1 փ. 10 ֆ., իսկ միւսը 5—12 ֆ. Շատ պարզ է այս երևոյթը—այն մեղուաբոյծները, որոնք չեն խնայել ժամանակ և միջոցներ ու խնամել են մեղուներին ինչպէս հարկն է, այսօր լաւ մեղր ունեն, իսկ նրանք, որոնք թողել են անխնամ—մեղրից զրկված են։ Ընդհանրապէս մեղրի բերքը կարելի է միջակ համարել։

Կարծում ենք, որ այս տարի գոնէ, երբ հացը առատ է, գիւղացին չը պիտի անտարբեր լինի դէպի հասարակական օգտակար գործերի իրականացումը. այն գիւղերը, որոնք չունեն աղբիւրներ, պիտի մըտածեն աղբիւր բերելու մասին, նրանք, որոնք սրանից 5—6 տարի առաջ սկսել են դպրոցական գեղեցիկ շէնքեր և այս կամ այն պատճառով կիսատ թողել մատնելով քայքայման, պէտք է ջանք դնեն վերջացնել նրանց, պէտք է օգտվել դէպքից և բերել տալ գիւղատնտեսական կատարելագործված գործիքներ և մեքենաներ, մըտածել անասունների ցեղի ազնուացման մասին, բերել ընտանի թռչունների լաւ ցեղեր, փորձելու համար զանազան հացի և խոտերի սերմեր և այլն։

Սրանց իրականացման գործում մեծ պարտականութիւն է ընկնում գիւղի գրագէտ և բանիմաց մասի վրա։

Արտուր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թագաւոր Կայսրը, համաձայն Ռուսական Կայսերական և Արքայական շքանշանների կանցլէրի ներկայացրած ամենահպատակ զեկուցագրի, 1912 թ. օգոստոսի 22-ին ամենաողորմածաբար բարեհաճեց շնորհել անբասիր ծառայութեան գերազանցութեան նշաններ 50 տարվայ համար Գէօրգիէվի ժապաւէնի վրա գեներալ-ադիւտանտ, հեծելազօրի գեներալ, Ն. Կ. Մ. Կովկասի Փոխարքայ, Պետական Խորհրդի անդամ, կովկասեան զինւորական շրջանի ընդհանուր հրամանատար Կոմս Իլլարիօն Վօրօնցօվ-Դաշկօվին. 40 տարվայ ծառայութեան համար, Գէօրգիէվի ժապաւէնի վրա Կովկասի Փոխարքայի զինւորական մասի օգնական գեներալ Նիկօլայ Շատիլօվին։

◆ Օգտվելով ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի օգնական Դումիտրաշկօյի Թիֆլիսում գտնվելուց, քաղաքային վարչութիւնը մի ընդարձակ գրութիւն է պատրաստել այն կարիքների մասին, որոնք կապված են երկաթուղային գործի հետ։ Յիշեալ գրութեան մէջ մատնանշված է ի միջի այլոց, որ Կովկասում ազգաբնակութիւնը ճնշվում ու նեղվում է վագոնների պակասութիւնից, գնացքների դանդաղերթից Կարսի գծի վրա, բեռները ուշ տալուց և այլն։

◆ Մօսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան կովկասեան բաժանմունքին նշանակված է 500 րուբլի նպաստ։

◆ Կովկասից ևս երկու ներկայացուցիչ են մեկնում Հռոմ՝ մասնակցելու հնագիտական կօնգրէսին, որ բացվելու է այս ամսի 26-ին։

◆ Ինչպէս յայտնի է, ամիսներ առաջ մինիստրների խորհուրդը թոյլատրեց Սարուխանօվօ-Կուրինսկի Ընկերութեանը երկաթուղի կառուցանել Եւլախ կայարանից մինչև Շուշի քաղաքը։ Այժմ, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից, Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հաստատել է մինիստրների խորհրդի տուած թոյլտուութիւնը։ Մնում է օր առաջ ձեռնարկել յիշեալ գծի կառուցման նախնական աշխատանքներին։

◆ Ստացանք Երևանից՝ Ալ. Եղիազեանից 5 րուբ. «Մշակի» № 189-ի մէջ յիշատակված չքաւոր աշակերտի ուսումնավարձը վճարելու համար։ Որովհետև առաջին կիսամեակի 5 րուբլին արդէն ստացված է մի անձից և վճարված դպրոցին, այս նոր ստացած 5 րուբ. կը վճարվի իբրև երկրորդ կիսամեակի ուսումնավարձ։

◆ Մայրաքաղաքի յայտնի դասախօս Այխենվէլդի առաջին դասախօսութիւնը Թիֆլիսում տեղի կունենայ սեպտ. 14-ին Վրաց Ազնուականութեան թատրոնում, Տօլստօյի գրուածքների մասին։ Երկրորդ դասախօսութիւնը հետևեալ օրը նուիրված կը լինի Չեխօվին և կը կայանայ Հասարակական կլուբի նոր շինութեան մէջ։

◆ Վաղը նշանակված է ժողովրդական համալսարանների ընկերութեան վարչութեան նիստը՝ ընկերութեան անցեալ տարվայ հաշիւը քննելու և նախահաշիւ կազմելու համար։

◆ Մօսկվայում այսօրվանից բացվում է ոչխարապահութեան ցուցահանդէս, ուր լինելու են նաև Կովկասից ուղարկված աւելի քան 100 տեսակի ոչխար։

◆ Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել, որ ինքն ստացել է եղբարք Կաֆեաններից 25 րուբ. ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր, որի համար և յայտնում է շնորհակալութիւն։

◆ Կովկասի Փոխարքան բաւարարութիւն տուեց Բագուի քաղաքապետի միջնորդութեանը՝ աւելացնելու ռուսական կուրիայի ընտրողների թիւը սահմանվածի դէմ։

◆ Առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Լ. Եւանգուլեանի քննական զեկուցագրի հիման վրա՝ Բագուի ոստիկանապետի օգնականի պաշտօնակատար Դաւիդօվին իջեցրին ոստիկանական պրիստավի պաշտօնի։

◆ Բագւում Կուլտուրական Միութիւնը արդէն ձեռնարկել է իր սեփական շինութեան կառուցման աշխատանքներին։

◆ Բագւում կառուցվում է բանտային նոր շէնք 600 հոգու համար։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան թատրոնում աւարտվում են բեմի աշխատանքները ռուսաց դրամատիկական սէզօնի բացման առիթով, որ նշանակված է սեպտեմբերի 18-ին։ Յուշարարի տեղը բոլորովին նորոգված է Մոսկվայի կայսերական Փոքր թատրոնի օրինակով։ Պատրաստված է նոր վարագոյր։ Պատրաստվում են նոր շատ դեկորացիաներ և նոր կահ-կարասիք ու րեկվիզիտներ։ Ամբողջ խումբը արդէն եկել է և ռեժիսեօր Տուգանովը ձեռնարկել է ներկայացումների փորձերին։ Սէզօնի բացման առիթով կը տրվեն երկու բոլորովին չը ներկայացված պիէս։

◆ Հայկական ներկայացումների շարքը Թիֆլիսի Արտիստական թատրոնում կը սկսվի հոկտեմբերի սկզբին։

◆ Ժողովրդական Տան մէջ ռուսական թատրոնական սեկցիայի ներկայացումների սէզօնը կը բացվի սեպտ. 9-ից «Էլուգինի հարսանիքը» կոմէդիայով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սեպտ. 2-ին, երդուեալ-հաւատարմատարի օգնական Ախիլէս Կունդուրօվը, որ ապրում է Սեմեօնօվսկայա փող. № 1 տան մէջ, յայտնեց ոստիկանութեան, որ նրա գրասեղանի միջից անյայտ մարդիկ գողացել են 2200 ր. գումարի 100-րուբլանոց թղթադրամներ։ Կասկածը յայտնվեց սպասաւորներ Լիւբով Գրօդսկայայի և Միխայիլ Լավրենովիչի վրա, նաև առաջինի ամուսին Գրօդսկիի վրա, որոնք և կալանաւորված են։

◆ Սեպտ. 2-ին պարսկահպատակ հաջի Նաղի Միրզայեվի խանութից նրա ծառայ Ալէքպէր Բարա-օղլին, որ այժմ կալանաւորված է, գիշերով յափշտակեց 3000 րուբլու մուրհակներ, 15 ր. փող և 10 ր. ռուսական հին դրամ։

◆ Սեպտ. 1-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցը տարվեց թունաւորման նշաններով գիւղացի 40 տարեկան Չեչէտկինը (պօստատար), որ ապրում է Կախէտինսկայա փողոցում։ Նրա կեանքը վտանգից զերծ է։

◆ Այս տարվայ յունիսի սկզբին Թիֆլիսի ոստիկանապետը տեղեկացաւ, որ Թիֆլիս է եկել մի յայտնի յանցագործ աւազակ պանդոկատէր Գարսօ Յարութիւնեանին սպանելու նպատակով։ Ոստիկանապետի առաջարկութեամբ՝ խուզարկու մասի կառավարիչը վերջապէս կարող եղաւ կալանաւորել յիշեալ յանցաւորին 8-րդ քաղաքամասում։ Կալանաւորվածը թիֆլիսեցի Իվան Կուպատաձէն է, 34 տարեկան, առանց որոշ պարապմունքի ու բնակութեան և կատարել է մի շարք խոշոր յանցանքներ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 3 սեպտեմբերի

Դրամատիք. Ընկերութիւնը մրցանակներ է հրատարակել թարգմանական և ինքնուրոյն պիէսների համար։ Արդ, ցանկալի է իմանալ, թէ Ընկերութիւնը ո՞ր կարգի մէջ պիտի դասէ մի պիէս, որ բառացի իմաստով ոչ թարգմանութիւն է, և ոչ ինքնուրոյն, այլ փոխակերպութիւն եւրօպ. վէպից։

Այս հարցումը ներքոյ ստորագրեալը ուղղել է մասնաւոր կերպով Ընկերութեան պ. նախագահին, բայց պատահմամբ թէ դիտմամբ՝ պատասխանը չը ստացվեց։ Այս պատճառով նա ստիպվում է նոյն հարցումը կրկնել հրապարակով՝ մամուլի միջնորդութեամբ։

Շահագրգռվածը

Բագու, 29 օգոստոսի

«Մշակի» № 172-ում Բագուից Վ. Թումանեան «Հայոց ներկայացումները» վերնագիրը կրող իր թղթակցութեան մէջ Բ. Հ. Կուլտուրական Միութեան մասին անճիշդ տեղեկութիւններ է տալիս։ Ճշմարտութիւնը վերականգնելու համար, խնդրում ենք, բարի եղէք այս գրութեան տեղ տալ «Մշակի» առաջիկայ համարներից մէկում։

Եթէ Վ. Թումանեան նեղութիւն կրէր թերթելու Միութեան հաշիւները, կը տեսնէր, որ Գեղարուեստական Սեկցիայի բիւջէն ոչ թէ 100,000-ների է համնում, ինչպէս նա հաստատում է, այլ հազիւ 10,000-ի։ Բայց չը նայելով դրան, Գեղարուեստական Սեկցիան բացի թատրօնական գործից, ունենալով ուրիշ շատ աշխատանքներ, ույժերի ներածին չափ 6 տարվայ ընթացքում արել է շարունակ փորձեր կազմակերպելու մասնակի ներկայացումներ, ինչպէս «Լէբլէբի-ջի» օպերան, նոյնպէս և մշտական հայ թատրօնական խումբ ունենալու։ Բայց դժբաղդաբար, այդ բոլոր ձեռնարկութիւնները միշտ վերջացել են վնասով, որովհետև վնասները չէ կարողացել ծածկել յիշված 100,000-ներ չունենալու պատճառով։

Ներկայումս Գեղարուեստական Սեկցիան ընդառաջ գնալով ժողովրդի հրամայողական պահանջներին՝ հոգում է կազմակերպել սիրողների մի խումբ մշտական ներկայացումներ տալու համար։

Բ. Հ. Կ. Միութեան դռները բաց են այն բոլորի համար, որոնք քիչ թէ շատ հետաքրքրվում են Միութեան գործունէութեամբ, և այդպիսիների համար Միութիւնը պատրաստ ունի ներկայացնելու իր հաշիւները։

Փոխ-Նախագահ Գեղարուեստական Սեկցիայի բիւրօյի՝ Յ. Շխեան

Յ. Գ.—Որովհետև ամառվայ ամիսների շնորհիւ ընդհատված էր սեկցիայի բիւրօյի պարապմունքները, ուստի ներկայ նամակը ուշ է ուղարկվում։

Նոյն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսում շարունակվում են ստացվել յուզիչ լուրեր Վանի շրջակայքի Թիւրքահայերի վտանգաւոր վիճակի մասին։ Քիւրդական հրոսակախմբերը սանձարձակ սպանում են կոտորած։

◆ Կ. Պոլսից հեռագրում են թերթերին, որ հայոց պատրիարքի հետ խօսակցելիս Թիւրքաց ներքին գործերի մինիստրը յայտնել է, թէ հայկական ջարդերի պատճառ հանդիսանում է հողային հարցը։

◆ «Р. Сл.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է. «Անատօլիայից ստացվում են տեղեկութիւններ հայկական ջարդերը շարունակվելու մասին։ Վանի լճի մօտերը քիւրդերը քարուքանդ են արել բոլոր գիւղերը։ Սպանված են 16 տղամարդ և երկու կին։ Սօֆիայում և Ալէքսանդրիայում կայացան բողոքի միտինգներ հայկական ջարդերի դէմ։ Վալին ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ պաշտօնանկ եղաւ. քիւրդերին զսպելու համար ուղարկված են զօրքեր»։

◆ Հաստատ աղբիւրներից յայտնում են, որ Իտալացի և Թիւրք պատգամաւորները համաձայնութեան են եկել պատերազմին վերջ դնելու պայմանների վերաբերութեամբ։

◆ Եւրօպական աղբիւրներից տեղեկացնում են թէ իբր Թիւրքիայի և Իտալիայի միջև արդէն հաշտութիւն է կնքվել, սակայն երկու կողմերը պարտաւորվել են առժամանակ այդ գաղտնի պահել։

◆ Թիւրքաց մեծ վէզիր Ղազի Մուխտար փաշան լուրջ կերպով տկարացաւ։

◆ Աթէնքից հեռագրում են, որ Յունաստանում զէնքի են կանչվել 125 հազար զինւոր. օֆիցէրները շտապով կանչված են իրանց զօրամասերը։ Զինւորական մինիստրութիւնը փութանակի պատրաստում է մեծ քանակութեամբ պաշար և ձի։ Ազգաբնակութեան յուզմունքն աճում է։

◆ Բուլգարիան արդէն ձեռնարկել է մեծ զօրախաղերի ու զինւորական վարժութիւնների։

◆ «News Wiener Journal»-ը հաղորդում է, որ Բ. Դուռը մի նօտա է պատրաստում յանուն մեծ պետութիւնների, խնդրելով մատնանշել Բուլգարիային, Սերբիային և Չերնոգօրիային, որ Թիւրքիայի հետ պատերազմելու դէպքում նրանք չեն կարող յոյս դնել որևէ մեծ պետութեան օգնութեան վրա։

◆ Սերբիան և Բուլգարիան դաշն կապեցին միասին գործելու Թիւրքիայի դէմ։

✦ Ալբանական ապստամբութեան գլխաւոր ղեկավարները նախագծել են նոր ապստամբութիւն Թիւրքական բայրամից յետոյ։ Թիւրքական խոստումները նրանց գոհացում չեն տալիս։

✦ Բուլղարիան անպատճառ պատերազմ է յայտարարելու Թիւրքիային, եթէ վերջինս չը կատարէ նրա առաջարկած նախագիծը։

✦ Թիւրքիան բուլղարական սահմանագլխին կենտրոնացրել է 125 հազար զինուորից բաղկացած զօրաբանակ։

✦ Ներկայումս Թիւրքերի և մալիսօրների միջև կատաղի կռիւ է։

✦ Պարիզի դրամատների մի խումբ մերժեց տալ Բուլղարիային 200 միլիոն Ֆրանկի փոխառութիւն, պատճառաբանելով որ ժամանակները վատ են։

✦ Մակեդոնական կոմիտէտը խզեց իր յարաբերութիւնները կառավարութեան հետ և գրաւում է անհաշտելի դիրք։

✦ Թիֆլիսից հեռագրում են «Р. Сл.»-ին. «Դաշնակցութեան գործի մէջ մեղադրվողներից մի քանիսը Պետերբուրգի դատական քննիչ Ալէքսանդրովից ծանուցագրեր ստացան, որոնցով պահանջվում է չը մեկնել Թիֆլիսից յընթացս ակսեալ սեպտեմբ. 15-ից մինչև 15 հոկտեմբերի, որովհետև այդ ժամանակ Ալէքսանդրովը մտադիր է գալ հարցաքննելու նրանց՝ նախկին քննիչ Լըժինի խարդախութիւնների գործի առիթով»։

✦ Պետերբուրգից հեռագրում են. «Սեպտեմբերի սկիզբներին տեղի կունենայ մինիստրների խորհրդի մեծ նիստը Կովկասի Փոխարքայի մասնակցութեամբ. նիստը նուիրված կը լինի կովկասեան գործերին, ի թիւս որոց նաև բարձր կրթական հաստատութիւն բանալու հարցին։

✦ Բանտային գլխաւոր վարչութիւնը մշակել է օրինագիծ 8 նոր բանտ կառուցանելու մասին։ Դրամ պահանջվում է 15 միլիոն րուբլի։ Օրինագիծը ներկայացվելու է 4-րդ Պետական Դումային։

✦ Ռուսաց սինոդը բացատրեց, որ գիտակցաբար անձնասպան եղողներն անպայման զրկվում են քրիստոնէական թաղումից։ Իսկ խելագար վիճակում ինքնասպանութիւն գործողները թաղվում են քրիստոնէական ծէսով, բայց անշուք։

✦ Գեներալ Դումբաձէն նշանակվելու է Ղրիմի բոլոր պալատների կոմենդանտ։

✦ Օգոստոսի 30-ին Մոսկվայում տօնվեց դերասան, դրամատուրգ և Փոքր թատրոնի խմբի ղեկավար վրացազգի Ալէքսանդր Իվ. Սումբաթովի (Իւժինի) բեմական գործունէութեան 30-ամեակը։ Յոբելեարի լաւագոյն գրուածք «Դաւաճանութիւնը» խաղացվում է նաև հայերէն։ Միևնոյն օրը լրացաւ Կորշի թատրոնի գոյութեան 30-ամեակը,

✦ Ռուսաց պաշտօնական շրջաններում տրամադրութիւն կայ օրինականացնել սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը։

✦ Մօտիկ ապագայում ձեռնարկվելու է անդրպարսկական երկաթուղու կառուցման աշխատանքներին։

✦ Պրինց Ֆարմանը մտաւ Քիրմանշահ. Նրան ընդառաջ գնաց 1500 մարդուց բաղկացած մի զօրամաս 6 թնդանօթով։

✦ Եապօնական կայսրի դագաղի վրա Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի կողմից դրվեց արծաթեայ պսակ։

✦ Շանխայից հեռագրում են. «Դաուդզեան գետի հովտում ջրհեղեղը ոչնչացրեց Ցզինգուէն քաղաքը։ Զոհվեցին մօտ 30,000 մարդ»։

✦ Անգլիական «Թայմս» լրագիրը հրատարակեց իր 40,000-րդ համարը հիմնվելու օրից (1785 թ.)։

✦ Ներկայումս Ֆրանսիայում տեղի են ունենում մեծ զօրախաղեր, որոնց մասնակցում են 110,000 զինուոր, 500 թնդանօթ, 54 աէրօպլան և 4 դիրիժաբլ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

1 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հակաժանտախտային մասնաժողովը Բէյրութ քաղաքը գտաւ խոլերայից անվտանգ։

Աստրախանի նահանգն ուղարկվեցին հակաժանտախտային ձեռնարկութիւնների համար դարձեալ հինգ բժիշկ։

Կ. ՊՈԼԻՍ։ Մի շարք թոյլ երկրաշարժերից յետոյ, որոնք տեղի էին ունենում համարեա ամեն օր յուլիսի 27-ից, այսօր ժամը 1 և 30 ր. կէսգիշերին նորից եղաւ ուժեղ հարուած, ըստ երեւոյթին առանց լուրջ հետեւանքների։



(M. 309206/309233)

ՃԱՐՊԱՅԻՆ ՇՊԱՐԸ
իդէալական միջոց է կաշին ամենագեղեցիկ գոյնի հասցնելու համար։
Անփոխարինելի է որպէս պարահանդէսի, սալոնի և առհասարակ ամենօրեայ շպար։ Ամուր կպչում է կաշուն և միանգամայն անվնաս է։ Արկղիկը 30 կօպ.։ Խնդրւմ՝ ուշադրութիւն դարձնել, որպէսզի տրվի ձեզ իսկական «№ 4711 շպարը»։ № 4711 օրէնքով հաստատված է։
Ֆերդ. Միւլհենս ● Պարֆիւմէրիա № 4711
ԿՅՕԼՆ Ր./վ. և ՐԻԳԱ։ Մատ. Ն. Մ. Ռուսաց Պալատի։
2—1

ՄՈՍԿՎԱ։ Քաղաքային սպանդանոցներին կից դրվեց մսի շուկայի հիմքը, որի մէջ կայ 93,000 պուդ տեղաւորող սառցարան։ Շինութիւնը կարժէնայ աւելի քան 4 միլիոն րուբլի։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Շրամարոյի և Սիգէտի շրջակայքը ջրի մէջ է։ Վնասները 2 միլիոն կրօն են։

ԿՈՒԴՀԱՖԵՆ։ Երկու նաւերի ընդհարման ժամանակ խեղդվեցին 7 մարդ։

ԲՈՒԽԱՐԱ։ Էմիրը մեկնեց Եալտա։

ԵԱՐՕՍԼԱՒ։ Ֆէմիդովկա գիւղում գտնվեց Եկատէրինա II-ի ժամանակի 15 պուդ հինգ-կոպէկանոց դրամներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց գումարել Մոսկվայում դեկտ. 19—22-ը վիրաբոյժների համառուսական համագումար։

ՊՐԱԳԱ։ Խնայողական գանձարանի վախճանված պաշտօնեայ Շիֆնէրը կէս միլիոն կրօն կտակեց Պրագայի սոկօլների միութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Невскій Голосъ» ի խմբագիրը ենթարկվեց 500 ր. տուգանքի։

Մեկնեց արձակուրդով առևտրի մինիստրը, անձնափոխանորդ նշանակելով իր օգնական Կոնօվալօվին։

2 սեպտեմբերի

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ։ Մի նաւակի խորտակման ժամանակ խեղդվեցին 7 մարդ։

ՄՈՍԿՎԱ։ Ձիարշաւներին ի պատիւ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի 10,000 րուբլի մրցանակը տարաւ իշխան Վոլկոնսկիի «Բրեվբոյը», որ 1 վերստ 66 սաժէն անցաւ մի րոպէ $13^{1}/_{2}$ վայրկեանում. ի յիշատակ Բորոդինոյի 100-ամեակի սահմանված 12,000 րուբլու մրցանակը վերցրեց Պոպովի «Էրնան». երկրորդը եկաւ Շերեմէտիէվայի «Լինցան», իսկ երրորդը—Մանթաշեանի «Գրիմզան»։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՆՈՒՄ Է

Իգդիր, Իգդիրցուն.—Ձեր գրութիւնը տեղից ս. Վարդանեան դպրոցի աննախանձելի դրութեան և աւ.-ուսուցչի ու վարժուհու յարաբերութիւնների մասին՝ չենք կարող տպել։

Ախալքալաք, Բ. Յարութիւնեանին.—«Ակնարկ մը Վիէննական Մխիթարեան Միաբանութեան գրական գործունէութեան վրայ» հրատարակութիւնը, որ տպված է լաւագոյն թղթի վրա և պարունակում է 67 նկար, արժէ 4 ֆրանկ։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Վերանորոգվում է աշակերտուհիների ընդունելութիւնը։ Ընդունվում են պատուէրներ կանացի և մանկական հագուստեղէնի, մատչելի գներով. առ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։ Гановская ул. № 9.
(ե. հ.) 644. 3—2

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մասլահաթները
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կօպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կօպ.)
Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ“ կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak“

ԹԱՒՐԻԶԻ
հայոց ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար
հարկաւոր են
1) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ռուսերէն լեզուի համար. նա պէտք է դաս տայ և թւաբանութիւն III բաժանմունքում։ Շաբաթը կունենայ 20—24 դաս։ Ռոճիկն է 350—370 թուման պարսից. ճանապարհածախս 30 ր.։
2) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի, ի բաղնութեան և ընդհանուր աշխարհագրութեան համար. շաբաթական 24 դաս, ռոճիկ 300 թուման պարսից. ճանապարհածախս 30 րուբլի։ Ցանկացողները դիմելու են Հ. Առաքելեանին, «Մշակի» խմբագրութիւն։
(ա.օ.) 655. 3—1

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
վերանորոգված ՄԻ ԲՆԱԿԱՐԱՆ կարասեղէնով և էլեքտրական լուսաւորութեամբ։ Կարելի է օրով և ամսով։ Գինը հանրամատչելի։ Հասցէն՝ Բարօնսկայա փող., Պետական Բանկի շինութեան կողքին։
650. 1—1

Ներսիսեան դպրոցի VII դասարանի ՄԻ ԱՇԱԿԵՐՏ ցանկանում է
ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ
սննդի եւ բնակարանի փոխարէն։
Դիմել՝ Коджорская № 2, Кюзяджянцу.
651. 2—1

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ
ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիսում (Նիկոլայէվսկայա փող. № 36, Վօրօնցովի արձանի մօտ)։
Մանրամասն տեղեկութիւններ տրվում են Կուրսերի գրասենեակը ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը։
(ա.օ.) 579. 25—20

ПРИНИМАЮТСЯ
НАХЛѢБНИКИ
Можно съ РЕПЕТИРОВКОЙ.
Монументный пер. № 1, близъ пам. Воронцову, кв. Сирунянъ.
(ա. օ.) 646. 2-2

Մինչև սեպտեմբերի 10-ը լոյս կը տեսնի
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպրի
ՄԱՐԳԱՐԷՆԵՐ ԵՒ ՀՐԵԻՑ ԱԶԳԻ
ՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՒ ՀԵՐՈՎԴԷՍ
Կրօնի նոր դասագիրքը, թոյլատրված Վեհափառ Հայրապետից, ծխ. դպրոցների Դ. տարվայ և միջն. դպրոցների Գ. դասարանի համար։ Դիմել Թիֆլիսի գրախանութներին։
(օ. մ.) 640. 5—2

Լոյս են տեսել
Մ. ՏԱՐԱԽՉԵԱՆԻ
1) «ՁԵՌՆԱՐԿ ԹԵԼԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» (III տիպ) . 15 կ.
2) «Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ» 3 կ.
Դիմել՝ Армавиръ (Куб. обл.), учителю Тарахчіану, կամ Բագուի «Պօլեզնիկ» և Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրավաճառանոցներին։
(ե. ու.) 595. 10—6

ԲԺՇԿԱԿԱՆ ՖԷԼԴՇԷՐ
Ա. ԵՍԱՅԵԱՆ
Тифлисъ, Семеновская ул., № 9. Ժամը 3—4-ը։
1) «Վեներակ հիւանդութիւնների բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով, և րեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք իւրաքանչիւր չափահաս գաւառացու համար, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ, գ. 50 կ.։ 2) «Տրիպէր (Սուսանակ) և նրա բժշկութիւնը», նկարներով, խորհուրդներով և րեցեպտներով, գ. 20 կ.։ 3) «Կնիկարմատի շալվարը», նոր վօդեվիլ չափահասների համար, գինը 20 կ.։ 4) «Սօնայի նշանդրէքը» վօդեվիլ, գ. 15 կ.։ 5) «Միևնոյն դագաղում», պատկեր հայթուրքական կռիւներից, պատկերներով, գ. 7 կ.։
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։ Ինձ դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ Тифлисъ, Семеновская ул. № 9.
(ե. կ.) 287. 50—37

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ եւ ԱՒԵՏ. ԽՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած
„ԴԱՍԸՆԿԵՐ“
Ա. տարի (գունաւոր պատկերներով) չորրորդ տիպ. . . . 40 կ.
Բ. տարի . . . . երրորդ տիպ. . . . 50 կ.
Գ. տարի . . . . երկրորդ տիպ. . . . 60 կ.
Դ. տարի . . . . 70 կ.
Բոլոր գրքերն ունեն բազմաթիւ ձեռագիր յօդուածներ, յարմարեցրած ծխ. դպրոցների ծրագրի պահանջներին։ Գ. և Դ. տարին ունեն նաև շարադրութեան համար ձեռագիր նամակներ և շարադրական պատկերներ։
Ցանկացողները կարող են դիմել. Թիֆլիս՝ «Գուտտենբերգ», «Գիր», Երեւան, «Արարատ», Յովհաննիսեան գրախանութներին, կամ կազմողներին՝ Երեւան
Գումարով գնողներին կը լինի զեղջ։ (ե.հ.կ.) 649. 4—1

ՀԻՒԱՆԴՆԵՐ,
ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!
Երեան են եկել մեր Սպէրմինի սակաւարժէք նմանողութիւնները, որոնք ըստ ազդեցութեան ոչ մի առնչութիւն չունեն մերինի հետ, և դեռ յաճախ նրանք պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր։
Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կարուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետեւանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի կլինիկանների և բժիշկների գիտութիւնները։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել
ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ
անուան վրա և հեռու մնալ զանազան անուններով երեան եկող բոլոր մահլամներից և հեղուկներից, որոնց սակաւարժէք. համարհրատ. ունենք առանձին բրօշիւր, որն ուղ. է ձրի՝ ՍՊԷՐՄԻՆԻ մասին եղած նոր գրական. հետ միասին։
ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ПРОФЕССОРЪ Д-РЪ ПЕЛЬ и С-ья
ПОСТАВЩИКИ ДВОРА
ЕГО ИМПЕРАТОРСК. ВЕЛИЧЕСТВА
С.ПЕТЕРБУРГЪ
В.О. 7 ЛИНІЯ 18.

(П. 108963)
12—1

ШКОЛА ХУДОЖЕСТВЕННЫХЪ РАБОТЪ
А. А. МАРДАНОВОЙ
преподаются уроки: 1) рисованія по газу, шифону, батисту, атласу и холсту, 2) рисованія перомъ по шелку, 3) рисованія брызгами, 4) выжиганія по дереву, кожѣ и тканямъ, 5) выжиганія по бархату и глубокое выжиганіе, 6) тисненія по металлу, бархату и кожѣ, 7) рѣзьба, 8) мозаика, 9) геліоминіатюръ по стеклу, 10) лѣпка, 11) выдѣлка куколъ изъ папье-маше, 12) тарзо и 13) интарзо; даютъ уроки и въ школахъ. Тамъ же особая учительница даетъ уроки изящныхъ рукодѣлій французскіе цвѣты, кройка, шитье и обувь; бѣднымъ безплатно. Пріемъ учениковъ и учениць. Справка даются въ школѣ ежедневно отъ 10—12 и отъ 4 до 5 ч. веч. По окончаніи курса выдаются свидѣтельства. Кирочная, № 2, уг. Набережной, второй подъѣздъ.
654. 1—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդինաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ կիրառումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենոգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտոնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. և) 568. 0—10

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթոդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ [illegible] Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(ա.օ.) 643. 0—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
հայոց լեզուի ուղղագրութեան նոր ձեռնարկ
„ԳՐԱԳԷՏ“
Ուղղագրական ձեռագիր յօդուածներ
(Տպարանական ձեռագիր տառերով՝ պատրաստված Գերմանիայում)։
ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ (Ա. եւ Բ. տարի) գինը 25 կօպ.
ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՅԿ (Գ. տարի) գինը 25 կօպ.
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ
կազմեցին
Մ. ԱԲԵՂԵԱՆ, Ա. ԱԲԵՂԵԱՆ և Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆ
Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» և միւս գրախանութներին։ (ե. շ.) 623. 4—4

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թիւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ
(ե. հ. կ.) 555. 0—15 Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный